

ԻՆՉ Է ՊԱՏԱՀՈՒՄ ՄԵՌՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանները

Մաս 5

«Բմաստունների սիրտը սուգի տանն է.» Ժողովող 7:4

«Լավ է տրտմությունը քան թե ուրախանալը, որովհետև երեսը տխրելիս սիրտը կուրախանա.» Ժողովող 7:3

Հարցրու ինքդ քեզ – Ինչպե՞ս եմ ես նայում մահվանը

Ա- Արդե՞տ ք մահվանը նայում եմ ներքևից

1. Մահը անխուսափելի է

«Բմաստունը մեռնում է հիմարի հետ.» Ժողովող 2:16

2. Մահը միայն ֆիզիկական է

«Մարդկանց պատահածը և անասուններին պատահածը մեկ է: Ինչպես սա է մեռնում, նույնպես էլ մեռնում է նա.» Ժողովող 3:19

3. Մահը անքննելի է

«Որովհետև ո՞վ պիտի տանի նրան որ տեսնի, թե իրանից հետո ինչ է լինելու.» Ժողովող 3:22

4. Մահը ամեն ինչի վերջն է

«Մեռելները մի բան չգիտեն... նրանց սերն էլ, նրանց ատելությունն էլ, նրանց նախանձն էլ վաղուց է փչացել.» Ժողովող 9:5-6

Մահվանը ներքևից նայելը բերում է հուսահատություն

Բ- Արդե՞տ ք մահվանը նայում եմ ներսից

«Նա ամեն բան արել է վայելուչ իր ժամանակին, նաև հավիտենականությունը դրել է նրանց սրտումը. բայց այնպես որ մարդս չի կարող ըմբռնել Աստծո արած գործքը գլխիցը մինչև ծայրը.» Ժողովող 3:11

Մահվանը ներսից նայելը բերում է շփոթություն

Գ- Արդե՞տ ք մահվանը նայում եմ վերևից

ա- Ին՞չ է պատահելու մեռնելուց հետո

Մենք կգրկվենք Տիրոջ ներկայությունից

«Բոցավառ կրակով վրեժ առնելու նրանցից, ովքեր Աստծուն չեն ճանաչում ու մեր Տեր Հիսուսի Ավետարանին չեն հնազանդում, ովքեր պատիժ կրեն՝ հավիտենական կործանումով զրկվելով Տիրոջ երեսից ու նրա փառավոր գործությունից.» Բ Թեսալոնիկեցիս 1:8-9
«Տերը մեր նկատմամբ համբերող է լինում, որովհետև չի ցանկանում, որ կորչողներ լինեն, այլ որ բոլորն ապաշխարության հասնեն.» Բ Պետրոս 3:9

Կամ- Մենք կվայելենք Տիրոջ ներկայությունը

«Ինքն Աստված նրանց հետ կլինի և նրանց աչքերից ամբողջ արտասուքը կարբի. այլևս մահ չի լինի. ո՞չ սուգ, ո՞չ աղաղակ, ո՞չ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան.» Հայտ. 21:3-4
«Քո երեսի առաջին ուրախությունների լիություն կա, և քո աջ կողմը՝ քաղցրություններ՝ հավիտեան.» Սաղմոս 16:11

Մահվանը վերևից նայելը բերում է հույս

բ- Ին՞չ ես անում եմ մեռնելուց առաջ, մեռնելուց հետո՞վա համար
«Բայց մենք հենց ինքներս մեր մահվան վճիռն ունեինք, որպեսզի մենք մեզ վրա հույս չդնենք, այլ Աստծու վրա, որ մեռելներին հարություն է տալիս.» Բ Կորնթացիս 1:9

Ինչպե՞ս պետք է պատրաստվել մեռնելու – 2 կարևոր բաներ

1. Վստահել Հիսուս Բրիստոսին

«Հիսուս մահը խափանեց և կյանքն ու անմահությունը լույսի մեջ բերեց Ավետարանի միջոցով.» Բ Տիմոթեոս 1:10

2. Ներդնել հավիտենականության համար

«Եվ քաղցր է լույսը, և ախորժելի է աչքին տեսնել արևը. Իրավ եթե մարդս շատ տարիներ էլ ապրի, նրանցում թող ուրախանա. բայց թող հիշի խավարի օրերը, որ շատ են լինելու. ամեն ինչ որ պիտի գա՝ ունայն է.» Ժողովող 11:7-8

Հաջորդ Քարոզի Թեման: «Ինչքա՞ն դրամն է բավարար»
Հովիվ Սարո Խաչիկեան